

**Եթե դուք աշխատում էիք, ունեիք աշխատանքային պայմանագիր և կորցրել եք աշխատանքը, իմացեք, թե որ դեպքում կստանաք ամսեկան 200 լարի փոխհատուցում**

***Նկատի ունեցեք!***

- **200 լարի փոխհատուցում ստանալու իրավունք չունեն** այն անձիք, որոնց հաշվեհամարին 2020 թվականի առաջի եռամսյակում գրանցվել է աշխատավարձի փոխանցում – բյուջետային կազմակերպություններից, ազգային բանկից, ազգային կարգավորող մարմնից, ձեռնարկություններից, որի բաժնետոմսերի/բաժնեմասերի 50%-ից ավելին պատկանում է պետությանը, Ինքնավար հանրապետության կամ մուիցիպալիտետների, կամ նմանատիպ ձեռնարկության հիմնադրած ձեռնարկություններից:
- **Նմանատիպ կառույցներ համարվում են.**
  - Նախարարությունները
  - Քաղաքապետարանները
  - Պետության կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծված հանրային իրավունքի իրավաբանական անձիք (ներառյալ հանրային դպրոցները, թատրոնները, անսամբլները և թանգարանները):
  - Եվ այլն:

Սահմանված բացառություններից բացի, բոլոր մյուս ձեռնարկություններում աշխատողները իրավունք կունենան փոխհատուցում ստանալու, եթե կրավարարեն համապատասխան պայմանները:

**1. Եթե ես աշխատել եմ, ո՞ր դեպքում կստանամ փոխհատուցում և ինչ չափով:**

Եթե դուք աշխատել եք 2020 թվականի առաջին 3 ամիսների ընթացքում առնվազն գոնե մեկ ամիս և ստացել եք աշխատավարձ (որը ձեր գործատուն պետք է տեղեկատվություն ներկայացրած լինի եկամուտների ծառայություն) և արտակարգ դրության ընթացքում դուք կորցրել կամ դադարեցրել եք աշխատելը, և չեք ստացել այլևս աշխատավարձ, ունեք իրավունք ստանալու ***փոխհատուցում ամիսը 200 լարու չափով, այս ծրագրի գործարկումից 6 ամսվա ընթացքում:***

2. Եթե մարտ ամսվա աշխատավարձս ապրիլ ամսին եմ ստացել, բայց իրականում ապրիլից չեմ աշխատել, ու՞նեմ թե ոչ իրավունք 200 լարի փոխհատուցում ստանալ ապրիլ ամսից:

Քանի որ աշխատավարձ ստացել եք ապրիլին և որի մասին եկամուտների ծառայություն տեղեկացվել է ապրիլ ամսին, դուք փոխհատուցում ստանալու իրավունք ունեք միայն մայիսից:

3. Ի՞նչպես պետք է վարվեմ և որ գործակալությանը պետք է դիմեմ, որ ստանամ ամսեկան 200 լարի փոխհատուցում:

Դուք չպետք է դիմեք ոչ մի գործակալություն, ձեր ընկերությունը, որտեղ որ դուք աշխատել եք, որտեղից դուք ազատվել եք կամ ժամանակավորապես գտնվում եք չվճարվող արձակուրդում - ***էլեկտրոնային եղանակով ոչ ուշ քան յուրաքանչյուր ամսվա 15-ը***, եկամուտների ծառայություն հատուկ ձևով պետք է ներկայացնի այն անձանց ցանկը, որոնց աշխատավարձը փոխանցված է եղել 2020 թվականի առաջին եռամսյակում – հունվար փետրվար, մարտ ամիսներին գոնե մեկ անգամ և այլևս չի վճարել աշխատավարձ հաջորդ ամսից:

4. Ի՞նչ է անում եկամուտների ծառայությունը նրանից հետո, երբ գործատուն ներկայացնում է տեղեկատվությունը:

Եկամուտների ծառայությունը կմշակի այդ տվյալները և համապատասխան անձանց ցանկը, որոնք իրավունք ունեն ստանալու 200 լարի, կներկայացնի զբաղվածության գործակալություն ոչ ուշ, քան մինչև ամսի 20-ը, փոխհատուցումը փոխանցելու համար:

5. Ե՞րբ և որտեղ կստանամ 200 լարին:

Փոխհատուցումը զբաղվածության գործակալությունը կփոխանցի ձեր բանկային հաշվեհամարին, ***ոչ ուշ քան աշխատավարձ չստացած ամսվա հաջորդ ամսի 30-ը***: Օրինակ, եթե անձը չի ստացել մայիս ամսվա աշխատավարձը, համապատասխանաբար փոխհատուցումը կստանա ոչ ուշ քան մինչև հունիսի 30-ը:

**6. Ո՞ր դեպքում է հնարավոր դադարեցվի 200 լարի փոխհատուցումը նշանակվելուց հետո 6 ամսվա ընթացքում:**

Փոխհատուցումը դադարեցվում է.

- ա) Եթե դուք նորից սկսում եք աշխատել և 2020 թվականի մայիսի 1-ից հետո եկամուտների ծառայությունում ներկայացվում է դրա վերաբերյալ տեղեկատվություն,
- բ) Անձամբ դիմումով դիմում եք դադարեցնել փոխհատուցումը,
- գ) Եթե Վրաստանի քաղաքացի եք և դուրս եք գալիս Վրաստանի քաղաքացիությունից կամ կորցնում եք Վրաստանի քաղաքացիությունը,
- դ) Եթե մահանում է փոխհատուցում ստացող անձը:

**7. Աշխատել եմ 2020 թվականի առաջին եռամսյակում, փոխանցվել է աշխատավարձ, բայց ազատվել եմ աշխատանքից, ինչպես նաև ունեի փոքր բիզնես և բավարարում եմ 300 լարի փոխհատուցում ստանալու նախապայմաններին: Ո՞րն է թե ոչ իրավունք միաժամանակ ստանալու ինչպես ամենամսյա 200 լարին, այնպես էլ ինքնազբաղվածության համար նախատեսված 300 լարի փոխհատուցումը:**

Երկու փոխհատուցումը միաժամանակ չեք կարող ստանալ և այս դեպքում դուք իրավունք ունեք ստանալու 200 լարիանոց փոխհատուցումը: